ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 5/5

19 ՀՈՒՆԻՍԻ 2025թվական

ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու 15 անդամներ:

Բացակա էին՝ Նելլի Ալիխանյանը, Գագիկ Ասրյանը, Շավարշ Գյուրջինյանը, Ժիրայր Միրզոյանը, Արտյոմ Պողոսյանը, Վահրամ Սուքիասյանը

Համայնքի ղեկավարի հրավերով ավագանու նիստին մասնակցում էին՝ Վաղարշակ Գրիգորյան, Տիգրան Ավալյան, Ալինա Ալավերդյան, Նարինե Պապյան, Աննա Թումանյան, Մելինե Պապյան

Նիստը վարում էր Բերդ համայնքի ղեկավար՝ Աստղիկ Հակոբյանը

Նիստը արձանագրում էր աշխատակազմի քարտուղարի ժ/պ՝ Մարտին Ապրեսյանը

ԼՍԵՑԻՆ

ՀՀ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 19 -Ի ՀԻՆԳԵՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(ԶԵԿ. ԱՍՏՂԻԿ ՀԱԿՈԲՅԱՆ)

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 14-րդ և 62-րդ հոդվածների, Բերդ համայնքի ավագանին **որոշում է՝**

1.Հաստատել Բերդ համայնքի ավագանու հերթական նիստի հետևյալ օրակարգը.

1) **ՀՀ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿԻՉՆԵՐԻ ԱՆՎԱՄԲ ԳՐԱՆՑՎԱԾ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԵՐԻ, ԳՈՒՅՔԻ ՎԱՐՁԱՎՃԱՐՆԵՐԻ ՀԱՐԿԵՐԻ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

/Զեկ. Տ. Ավալյան/

2)ՀՀ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԲԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԳՈՒՅՔԱՑԱՆԿՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԽՈՂՈՎԱԿՆԵՐԸ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. Տ. Ավալյան/

3)ՀՀ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԲԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԳՈՒՅՔԱՑԱՆԿՈՒՄ ԱՎԵԼԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. Տ. Ավալյան/

4)ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ, ՀԱՄԱՅՆՔ ԲԵՐԴ, ՔԱՂԱՔ ԲԵՐԴ, Ս.ԹԵՀԼԻՐՅԱՆ ՓՈՂՈՑԻ ՎՐԱ ՆՐԲԱՆՑՔ ԱՎԵԼԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. Վ. Գրիգորյան/

5)ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ 11-010-0250-0005 ԾԱԾԿԱԳՐՈՎ, 0.1 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԱՐՈՏԱՎԱՅՐ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԸ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՄԲ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. Վ. Գրիգորյան/

6)ՀՀ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԱՎՏՈՏՆԱԿԸ ՀՈՂԱՄԱՍՈՎ ՀՐԱՆՏ ՀԱԿՈԲԻ ՀԱԿՈԲՅԱՆԻՆ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. Վ. Գրիգորյան/

7)ՀՀ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 17-Ի ԹԻՎ 42-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՈՒՂՂՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. Վ. Գրիգորյան/

8)ՀՀ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԱՎՏՈՏՆԱԿԸ ՀՈՂԱՄԱՍՈՎ ԴԱՎԻԹ ՎԻԿՏՈՐԻ ՂԱՎԱԼՅԱՆԻՆ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. Վ. Գրիգորյան/

9)ԱՐԱՅԻԿ ԱՐՄԵՆԻ ՊՈՂՈՍՅԱՆԻ, ՆՈՒՆԵ ՄԱՐՏԻՐՈՍԻ ԿԱՐԱՊԵՏՅԱՆԻ, ՔՐԻՍՏԻՆԵ ԱՐԱՅԻԿԻ ՊՈՂՈՍՅԱՆԻ, ՌՈՄԱՆ ԱՐԱՅԻԿԻ ՊՈՂՈՍՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԽԱՂՈՂԻ ԱՅԳՈՒ ԸՆԴԼԱՅՆՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՀՈՂԱՄԱՍ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. Վ. Գրիգորյան/

10)ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ 11-054-0282-0002 ԾԱԾԿԱԳՐՈՎ, 0.37937 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԱՐՈՏԱՎԱՅՐԸ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՄԲ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. Վ. Գրիգորյան/

11)11-048-0701-0001 ԾԱԾԿԱԳՐՈՎ, 0.008596 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. Վ. Գրիգորյան/

12)ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆԸ՝ Ի ԴԵՄՍ ՊԵՏԱԿԱՆ ԳՈՒՅՔԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԿՈՄԻՏԵԻ, ՆՎԻՐԱԲԵՐՈՒԹՅԱՄԲ ՀՈՂԱՄԱՍ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. Վ. Գրիգորյան/

13)ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ 11-061-0103-0145 ԾԱԾԿԱԳՐՈՎ, 0.55762 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԱՐՈՏԱՎԱՅՐԸ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՄԲ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. Վ. Գրիգորյան/

14)ՀՀ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՀԻՆԳԵՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ԳՈՒՄԱՐՄԱՆ ՕՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. Ա. Հակոբյան/

Կողմ-13 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 74-Ա)*

ԼՍԵՑԻՆ

ՀՀ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿԻՉՆԵՐԻ ԱՆՎԱՄԲ ԳՐԱՆՑՎԱԾ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԵՐԻ, ԳՈՒՅՔԻ ՎԱՐՁԱՎՃԱՐՆԵՐԻ ՀԱՐԿԵՐԻ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԱՆՆԱ ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆ)

ՀՀ Տավուշի մարզի Բերդ համայնքի տարբեր բնակավայրերի բնակիչներ դիմել են Բերդի համայնքապետարան, որ վճարել են իրենց կամ իրենց հարազատների անվամբ գրանցված անշարժ գույքերի , ինչպես նաև գույքի վարձավճարների գծով առաջացած պարտքերը և խնդրել զեղչել առաջացած տույժերը:

Ղեկավարվելով ՀՀ հարկային օրենսգրքի 230-րդ հոդվածի 3-րդ մասով, 245-րդ հոդվածի 2-րդ մասով և ՀՀ կառավարության 2012 թվականի հունիսի 22-ի N 822-Ն որոշմամբ հաստատված

կարգի 3-րդ մասի 1-ին կետով, 5-րդ, 8-րդ մասերի պահանջներով և <<Գույքահարկի և հողի հարկի գծով առաջացած ապառքների մասին>> 28.04.2012թ. ՀՀ օրենքով, **Բերդ համայնքի ավագանին որոշում է՝**

1. ՀՀ Տավուշի մարզի Բերդի համայնքապետարան դիմած բնակիչների անվամբ գրանցված անշարժ գույքերի, ինչպես նաև գույքի վարձավճարների հարկերի գծով տրամադրել արտոնություններ՝ համաձայն հավելված 1-ի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Կողմ-12 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 75-Ա)*

ԼՍԵՑԻՆ

ՀՀ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԲԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԳՈՒՅՔԱՑԱՆԿՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԽՈՂՈՎԱԿՆԵՐԸ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ՏԻԳՐԱՆ ԱՎԱԼՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ, 42-րդ կետերով, «ՀՀ վարչատարածքային բաժանման մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին 2017 թվականի հունիսի 9-ի ՀՀ օրենքի 1-ին հոդվածով և 18.53 հավելվածով

Համայնքի ավագանին որոշում է՝

1.Տալ համաձայնություն Բերդ համայնքի Ագեձոր բնակավայրի գույքացանկում ընդգրկված Ծիլի Ծովի նախկին խմելու ջրագծի ներկայումս չօգտագործվող 219մմ տրամագծով 100(մեկ հարյուր) գծմետր երկարությամբ մետաղական խողովակները անհատույց օգտագործման իրավունքով տրամադրել ՈՒՏԻՔ ՋՕԸ-ին՝ Պառավաքար բնակավայրի ոռոգման ջրագիծը վերակոուցելու նպատակով:

2. Տալ համաձայնություն Այգեձոր բնակավայրի գույքացանկում առակա օգտագործած մետաղական խողովակները ներառել Պառավաքար բնակավայրի գույքացանկում:

Կողմ-14 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 76-Ա)*

ԼՍԵՑԻՆ

ՀՀ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԲԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԳՈՒՅՔԱՑԱՆԿՈՒՄ ԱՎԵԼԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ՏԻԳՐԱՆ ԱՎԱԼՅԱՆ)

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ, 42-րդ կետերով, **Բերդ համայնքի ավագանին որոշում է՝**

1.Տալ համաձայնություն Սուբվենցիոն ծրագրով ձեռք բերված ՀՀ Տավուշի մարզի Բերդի համայնքապետարանի կարիքների համար ապրանքների մատակարարման թիվ N ԲՀ-ԳՀԱՊՁԲ-24/62-2 գնման պայմանագով հատկացված համակցված ճանապարհային սպասարկման մեքենան՝ 1 հատ, սերիական համարը՝ LGAX2B139S9859144 , արտադրության տարեթիվը՝ 2025թ., 31800000 (երեսունմեկ միլիոն ութ հարյուր հազար) ՀՀ դրամ արժեքով , ընդգրկել Բերդ համայնքի գույքացանկում:

2.Գույքացանկում ընդգրկված գույքը անհատույց օգտագործման իրավունքով տրամադրել <<Բերդի կոմունալ ծառայություն>> համայնքային ոչ առևտրային կազմակերպությանը:

3.Կատարել տրանսպորտային միջոցի հաշվառում ՀՀ ոստիկանության «Ճանապարհային ոստկանության» բաժանմունքում:

Կողմ-14 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 77-Ա)*

ԼՍԵՑԻՆ

ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ, ՀԱՄԱՅՆՔ ԲԵՐԴ, ՔԱՂԱՔ ԲԵՐԴ, Ս.ԹԵՀԼԻՐՅԱՆ ՓՈՂՈՑԻ ՎՐԱ ՆՐԲԱՆՑՔ ԱՎԵԼԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ՎԱՂԱՐՇԱԿ ԳՐԻԳՈՐՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետով, 35-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ և 22-րդ կետով, 43 հոդվածի 1 մասի, 1 կետով, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը, Բերդ համայնքի ավագանին որոշում է՝

1.Տալ համաձայնություն Տավուշի մարզ, համայնք Բերդ, քաղաք Բերդ, Ս. Թեհլիրյան փողոցի վրա ավելացնել թիվ 1 նրբանցք:

Կողմ-14 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 78-Ա)*

ԼՍԵՑԻՆ

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ 11-010-0250-0005 ԾԱԾԿԱԳՐՈՎ, 0.1 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԱՐՈՏԱՎԱՅՐ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԸ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՄԲ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ՎԱՂԱՐՇԱԿ ԳՐԻԳՈՐՅԱՆ)

Ղեկավարվելով 2010 թվականի հունիսի 24-ին ընդունված
<<Հայաստանի Հանրապետության վարչատարածքային բաժանման մասին>>
ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին ՀՀ օրենքով,
ՀՀ Կառավարության 2010 թվականի հունվարի 14-ի 16-Ն որոշմամբ և հաշվի առնելով,
որ նշված հողամասը /ծածկագիր՝ 11-010-0250-0005/
չի գտնվում ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտում,
չի առաջացնում սերվիտուտ, ընդգրկված է ՀՀ հողային օրենսգրքի 60-
րդ հոդվածով սահմանված հողերի կազմում, **Բերդ համայնքի ավագանին որոշում է՝**

1.Տալ համաձայնություն 10 տարի ժամկետով, մրցութային կարգով, վարձակալությամբ տրամադրելու Բերդ համայնքի վարչական սահմաններում ընդգրկված, պետական սեփականություն հանդիսացող՝ գյուղ Այգեձոր, 11-010-0250-0005 ծածկագրով, 0.1 հա մակերեսով արոտավայրը:

2. Հողամասի վարձակալության մեկնարկային գին սահմանել 5 000 /հինգ հազար/ ՀՀ դրամ:

3.
Կազմված գործը ներկայացնել Տավուշի մարզպետարան՝ եզրակացություն ստանալու համար:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ-14 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 79-Ա)*

ԼՍԵՑԻՆ

ՀՀ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԱՎՏՈՏՆԱԿԸ ՀՈՂԱՄԱՍՈՎ ՀՐԱՆՏ ՀԱԿՈԲԻ ՀԱԿՈԲՅԱՆԻՆ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(ԶԵԿ. ՎԱՂԱՐՇԱԿ ԳՐԻԳՈՐՅԱՆ)

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, ՀՀ հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի 4-րդ կետով և ՀՀ կառավարության 18.05.2006թ. N 912-Ն որոշման 34-րդ կետով և 35-րդ կետի գ) ենթակետով, հաշվի առնելով, որ նշված կառույցը կառուցված չէ ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա, ինչպես նաև ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք,

Բերդ համայնքի ավագանին որոշում է՝

1.Բերդ համայնքի վարչական սահմաններում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող Տավուշի մարզ, Բերդ համայնք, Բերդ քաղաք, Մ. Խորենացու փողոց, 43/2 հասցեում գտնվող 66.8ք.մ ընդհանուր մակերեսով արտաքին չափերով և 61.83ք.մ մակերեսով ներքին չափերով ավտոտնակը՝ 111757/մեկ հարյուր տասնմեկ հազար յոթ հարյուր հիսունյոթ/ ՀՀ դրամ արժեքով և դրա պահպանման ու սպասարկման համար 0,00832 հա մակերեսով հողամասը՝ 240240/երկու հարյուր քառասուն հազար երկու հարյուր քառասուն/ ՀՀ դրամ կադաստրային արժեքով ուղղակի վաճառքի ձևով օտարել՝ Հրանտ Հակոբի Հակոբյանին:

2. Օրենքով սահմանված կարգով կնքել անշարժ գույքի առուվաճառքի պայմանագիր:

Կողմ-14 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 80-Ա)*

ԼՍԵՑԻՆ

ՀՀ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 17-Ի ԹԻՎ 42-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՈՒՂՂՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(ԶԵԿ. ՎԱՂԱՐՇԱԿ ԳՐԻԳՈՐՅԱՆ)

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-34-րդ հոդվածներով, <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 21-րդ կետով, **համայնքի ավագանին որոշում է՝**

1. ՀՀ Տավուշի մարզի Բերդ համայնքի ավագանու 2025 թվականի ապրիլի 17-ի թիվ 42-Ա որոշման մեջ կատարել հետևյալ ուղղումը՝

1) Ավագանու որոշման առաջին կետում և վերնագրում կատարել ուղղում՝ Կամո Ռաֆիկի Մարդանյանի անվան, հայրանվան, ազգանվան հետ միասին ավելացնել Վարդուշ Լևոնի Շառյան, Գոհար Կամոյի Մարդանյան, Գայանե Կամոյի Մարդանյան, Գեղամ Կամոյի Մարդանյան անուն, հայրանուն, ազգանունները: Որոշումը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

1.Տալ համաձայնություն Բերդ համայնք, Նավուր գյուղ, 5 փողոց, 2 փակուղի, 4/1 հողամաս հասցեում գտնվող, Կամո Ռաֆիկի Մարդանյանի, Վարդուշ Լևոնի Շառյանի, Գոհար Կամոյի Մարդանյանի, Գայանե Կամոյի Մարդանյանի, Գեղամ Կամոյի Մարդանյանի սեփականությունը հանդիսացող 0.0922 հա մակերեսով բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասին՝ ընդլայնման նպատակով, 0.01853 հա մակերեսով, 11-046-0046-0015 ծածկագրով բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասը՝ 100 000 /մեկ հարյուր հազար/ ՀՀ դրամ կադաստրային արժեքով ուղղակի վաճառքի ձևով օտարել՝ Կամո Ռաֆիկի Մարդանյանին, Վարդուշ Լևոնի Շառյանին, Գոհար Կամոյի Մարդանյանին, Գայանե Կամոյի Մարդանյանին,Գեղամ Կամոյի Մարդանյանին:

2.Սույն որոշումից ծագող գույքային իրավունքների նոտարական ձևակերպման և պետական գրանցման հետ կապված վճարների ու տուրքերի վճարումը կատարվում է սույն որոշման 1-ին կետում նշված անձանց կողմից:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունման մասին իրազեկելու օրվանից:

Կողմ-13 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 81-Ա)*

ԼՍԵՑԻՆ

ՀՀ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԱՎՏՈՏՆԱԿԸ ՀՈՂԱՄԱՍՈՎ ԴԱՎԻԹ ՎԻԿՏՈՐԻ ՂԱՎԱԼՅԱՆԻՆ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(ՋԵԿ. ՎԱՂԱՐՇԱԿ ԳՐԻԳՈՐՅԱՆ)

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, ՀՀ հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի 4-րդ կետով և ՀՀ կառավարության 18.05.2006թ. N 912-Ն որոշման 34-րդ կետով և 35-րդ կետի գ) ենթակետով, հաշվի առնելով, որ նշված կառույցը կառուցված չէ ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա, ինչպես նաև ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք,

Բերդ համայնքի ավագանին որոշում է՝

1.Բերդ համայնքի վարչական սահմաններում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող Տավուշի մարզ, Բերդ համայնք, Վերին Կարմիր Աղբյուր գյուղ, 2 փողոց, 5/1 առևտրի սրահ հասցեում գտնվող 46.8ք.մ մակերեսով արտաքին չափերով և 40.62ք.մ մակերեսով ներքին չափերով ավտոտնակը՝ 265778/երկու հարյուր վաթսունհինգ հազար յոթ հարյուր յոթանասունութ/ ՀՀ դրամ արժեքով և դրա պահպանման ու սպասարկման համար 0,00468 հա մակերեսով հողամասը՝ 10193 /տասը հազար հարյուր իննսուներեք/ ՀՀ դրամ կադաստրային արժեքով ուղղակի վաճառքի ձևով օտարել՝ Դավիթ Վիկտորի Ղավալյանին:

2. Օրենքով սահմանված կարգով կնքել անշարժ գույքի առուվաճառքի պայմանագիր:

Կողմ-13 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 82-Ա)*

ԼՍԵՑԻՆ

ԱՐԱՅԻԿ ԱՐՄԵՆԻ ՊՈՂՈՍՅԱՆԻ, ՆՈՒՆԵ ՄԱՐՏԻՐՈՍԻ ԿԱՐԱՊԵՏՅԱՆԻ, ՔՐԻՍՏԻՆԵ ԱՐԱՅԻԿԻ ՊՈՂՈՍՅԱՆԻ, ՌՈՄԱՆ ԱՐԱՅԻԿԻ ՊՈՂՈՍՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԽԱՂՈՂԻ ԱՅԳՈՒ ԸՆԴԼԱՅՆՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՀՈՂԱՄԱՍ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(ՋԵԿ. ՎԱՂԱՐՇԱԿ ԳՐԻԳՈՐՅԱՆ)

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, ՀՀ Կառավարության 2001թ.ապրիլի 12-ի <<Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի օտարման,կառուցապատման իրավունքի և օգտագործման տրամադրման կարգը հաստատելու մասին>> թիվ 286 որոշմամբ հաստատված կարգի 6-րդ մասով, ՀՀ

հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի 1 մասի 8 րդ կետով և հաշվի առնելով,որ նշված հողամասը ընդգրկված չէ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի կազմում չի գտնվում ինժիներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում,չի սահմանափակում այլ անձանց իրավունքները, ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-34-րդ հոդվածներով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը, **որոշում եմ**

1.Քանի որ նշված հողամասը, որպես առանձին միավոր հնարավոր չէ օտարել, հիմք ընդունելով Արայիկ Արմենի Պողոսյանի, Նունե Մարտիրոսի Կարապետյանի, Քրիստինե Արայիկի Պողոսյանի, Ռոման Արայիկի Պողոսյանի դիմումը՝ տալ համաձայնություն Բերդ համայնքի, Տավուշ գյուղի վարչական սահմաններում գտնվող Արայիկ Արմենի Պողոսյանի, Նունե Մարտիրոսի Կարապետյանի, Քրիստինե Արայիկի Պողոսյանի, Ռոման Արայիկի Պողոսյանի սեփականությունը հանդիսացող Տավուշի մարզ, Բերդ համայնք, Տավուշ գյուղում գտնվող 11-030-0191-0007 ծածկագրով, 0.3242 հա մակերեսով գյուղատնտեսական խաղողի այգի հողամասին՝ ընդլայնման նպատակով, 11-030-0191-0053 ծածկագրով, 0.28575 հա մակերեսով գյողատնտեսական նշանակության խոտհարքը՝ 200 000 /երկու հարյուր հազար/ ՀՀ դրամ կադաստրային արժեքով ուղղակի վաճառքի ձևով օտարել՝ Արայիկ Արմենի Պողոսյանին, Նունե Մարտիրոսի Կարապետյանին, Քրիստինե Արայիկի Պողոսյանին, Ռոման Արայիկի Պողոսյանին:

2. Հաշվի առնելով , որ գրանցման հիմքերում առկա է 4 անձի անուն իսկ վկայականում, որպես սեփականատեր սխալմամբ նշվել է միայն Արայիկ Արմենի Պողոսյանի անուն, հայրանուն, ազգանունը, ուժը կորցրած ճանաչել Բերդ համայնքի ավագանու 13 փետրվարի 2025 թվականի N 17-Ա որոշումը:

2.Սույն որոշումից ծագող գույքային իրավունքների նոտարական ձևակերպման և պետական գրանցման հետ կապված վճարների ու տուրքերի վճարումը կատարվում է սույն որոշման 1-ին կետում նշված անձանց կողմից:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունման մասին իրազեկելու օրվանից:

Կողմ-14 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 83-Ա)*

ԼՍԵՑԻՆ

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ 11-054-0282-0002 ԾԱԾԿԱԳՐՈՎ, 0.37937 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԱՐՈՏԱՎԱՅՐԸ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՄԲ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(ԶԵԿ. ՎԱՂԱՐՇԱԿ ԳՐԻԳՈՐՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, Հողային օրենսգրքի 76, 77, 78, 80, 81 հոդվածներով և ՀՀ Կառավարության 2001թ. ապրիլի 12-ի Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի օտարման, կառուցապատման իրավունքի և

օգտագործման տրամադրման կարգը հաստատելու մասին թիվ 286 որոշմամբ հաստատված կարգով, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը,
Բերդ համայնքի ավագանին որոշում է՝

1. Տալ համաձայնություն 25 տարի ժամկետով,վարձակալությամբ տրամադրելու Տավուշի մարզի, Բերդ համայնքի,Պառավաքար գյուղի վարչական սահմաններում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության 11-054-0282-0002 ծածկագրով, 0.37937 հա մակերեսով արոտավայրը:

2. Սահմանել 0.37937 հա մակերեսով արոտավայրի տարեկան վարձավճարի մեկնարկային գինը 9500 /ինը հազար հինգ հարյուր/ՀՀ դրամ:

3. Վարձակալության պայմանագիրը կնքել՝ պայմանով՝ 5 /հինգ/ տարի հետո վարձավճարի փոփոխության հնարավորության համաձայնության չգալու դեպքում՝ պայմանագիրը լուծարել:

Կողմ-12 Դեմ-1 Ձեռնպահ-1

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 84-Ա)*

ԼՍԵՑԻՆ

11-048-0701-0001 ԾԱԾԿԱԳՐՈՎ, 0.008596 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ՎԱՂԱՐՇԱԿ ԳՐԻԳՈՐՅԱՆ)

Ղեկավարվելով <<Քաղաքաշինության մասին>> ՀՀ օրենքի 14³-րդ հոդվածի 5-րդ և 30-րդ մասերով,<<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 31-րդ կետի պահանջներով՝

Բերդ համայնքի ավագանին որոշում է՝

1.Հաստատել պետական սեփականություն հանդիսացող, Նորաշեն գյուղի վարչական տարածքում գտնվող, 0.008596 հա մակերեսով՝ 11-048-0701-0001 ծածկագրով, բնակավայրերի նպատակային նշանակության, ընդհանուր օգտագործման գործառնական նշանակության հողամասի գործառնական նշանակության փոփոխությունը, որպես բնակավայրերի նպատակային, հասարակական կառուցապատման գործառնական նշանակության հողերի՝ դրական կարծիքի առկայության պայմանով:

2.<<Քաղաքաշինության մասին>> ՀՀ օրենքի 143-րդ հոդվածի 14-րդ և 30-րդ մասերով սահմանված կարգով հողամասի նպատակային նշանակության փոփոխությունը պետական գրանցում ստանալուց հետո ընդգրկել համայնքի հողային ֆոնդի տարեկան ընթացիկ հաշվառման տվյալներում, համայնքի հողային հաշվեկշռում, արտացոլել համայնքի ընթացիկ քաղաքաշինական քարտեզում:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրվանից:

Կողմ-14 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 85-Ա)*

ԼՍԵՑԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆԸ՝ Ի ԴԵՄՍ ՊԵՏԱԿԱՆ ԳՈՒՅՔԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԿՈՄԻՏԵԻ, ՆՎԻՐԱԲԵՐՈՒԹՅԱՄԲ ՀՈՂԱՄԱՍ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(ՁԵԿ. ՎԱՂԱՐՇԱԿ ԳՐԻԳՈՐՅԱՆ)

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով հաշվի առնելով,որ նշված հողամասը ընդգրկված չէ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի կազմում, չի գտնվում ինժիներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, չի սահմանափակում այլ անձանց իրավունքները, ղեկավարվելով <<Քաղաքաշինության մասին>> ՀՀ օրենքի 143-րդ հոդվածի 5-րդ և 30-րդ մասերով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը, **համայնքի ավագանին որոշում է՝**

1. Հիմք ընդունելով ՀՀ Կառավարության 30 նոյեմբերի 2023 թվականի <<Մինչև 2026 թվականը կառուցվող, հիմնանորոգվող կամ վերակառուցվող 300 դպրոցների ծրագրում ընդգրկված դպրոցների ցանկը հաստատելու և ցանկում ընդգրկված դպրոցների համար սահմանված շինարարական աշխատանքների՝ կառուցման, վերակառուցման կամ հիմնանորոգման համար միջամտության աստիճանի չափորոշիչները սահմանելու մասին>> թիվ 2093-Ն որոշումը՝ տալ համաձայնություն չափորոշիչը բավարարելու համար 11-048-0701-0001 կադաստրային ծածկագրով, 0.008596 հա մակերեսով հողամասը նվիրաբերել Հայաստանի Հանրապետությանը՝ ի դեմս Պետական գույքի կառավարման կոմիտեի՝ Նորաշեն բնակավայրի դպրոցին հատկացնելու նպատակով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ-14 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 86-Ա)*

ԼՍԵՑԻՆ

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ 11-061-0103-0145 ԾԱԾԿԱԳՐՈՎ, 0.55762 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԱՐՈՏԱՎԱՅՐԸ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՄԲ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(ՁԵԿ. ՎԱՂԱՐՇԱԿ ԳՐԻԳՈՐՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, Հողային օրենսգրքի 76, 77, 78, 80, 81 հոդվածներով և ՀՀ

Կառավարության 2001թ. ապրիլի 12-ի Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի օտարման, կառուցապատման իրավունքի և օգտագործման տրամադրման կարգը հաստատելու մասին թիվ 286 որոշմամբ հաստատված կարգով, հաշվի առնելով, որ հողամասն ընդգրկված չէ ՀՀ հողային օրենսգրքի 60 հոդվածով սահմանված հողերի կազմում, չի գտնվում ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, չի սահմանափակում այլ անձանց իրավունքները, չի հակասում քաղաքաշինական նորմերին, չի առաջացնում սերվիտուտ հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը, Բերդ համայնքի ավագանին որոշում է՝

1. Տալ համաձայնություն 25 տարի ժամկետով,վարձակալությամբ տրամադրելու Տավուշի մարզի, Բերդ համայնքի, Վերին Կարմիր Աղբյուր գյուղի վարչական սահմաններում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության 11-061-0103-0145 ծածկագրով, 0.55762 հա մակերեսով արոտավայրը, լցակույտի և ավելացված հողի պահեստավորման համար:

2. Սահմանել 0.55762 հա մակերեսով արոտավայրի տարեկան վարձավճարի մեկնարկային գինը 18 000 /տասնութ հազար/ՀՀ դրամ:

3. Վարձակալության պայմանագիրը կնքել՝ պայմանով՝ 5 /հինգ/ տարի հետո վարձավճարի փոփոխության հնարավորության համաձայնության չգալու դեպքում՝ պայմանագիրը լուծարել:

Կողմ-13 Դեմ-0 Ձեռնպահ-1

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 87-Ա)*

ԼՍԵՑԻՆ

ՀՀ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՀԻՆԳԵՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ԳՈՒՄԱՐՄԱՆ ՕՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԱՍՏՂԻԿ ՀԱԿՈԲՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 62-րդ հոդվածի 2-րդ մասով, **Բերդ համայնքի ավագանին որոշում է՝**

1.ՀՀ Տավուշի մարզի Բերդ համայնքի ավագանու հինգերորդ նստաշրջանի հերթական նիստի գումարման օր և ժամ սահմանել 2025 թվականի սեպտեմբերի 09-ը՝ ժամը 16:00:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ-14 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 88-Ա)*

Ավագանու անդամներ

ՀԱՄԱՅԱԿ ԱԴԱՄՅԱՆ

ԱՆՆԱ ԱՎԱԼՅԱՆ

ՍԵՎԱԿ ԲԱԴԱԼՅԱՆ

ԶՎԱՐԴ ԾԱՏՈՒՐՅԱՆ

ԱՍՏՂԻԿ ՀԱԿՈԲՅԱՆ

ԱՐՄԵՆ ՃՈՒՂՈՒՐՅԱՆ

ՍԱՄՎԵԼ ՄԱԿԱՐՅԱՆ

ԱՆՆԱ ՄԱՆՈՒՉԱՐՅԱՆ

ԱՐԱՐԱՏ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ԱՆԱՀԻՏ ՄԵԺԼՈՒՄՅԱՆ

ԱՐԱՄ ՆԻԳՈՅԱՆ

ԱՐՄԻՆԵ ՊԱՊՅԱՆ

ԱՐՏԱԿ ՊՈՂՈՍՅԱՆ

ԱՆԱՀԻՏ ՋՈՒԼՀԱԿՅԱՆ

ԱՐԹՈՒՐ ՍԱՖԱՐՅԱՆ

Բերդ համայնքի ղեկավար

ԱՍՏՂԻԿ ՀԱԿՈԲՅԱՆ _____

Նիստն արձանագրեց՝ Մարտին Ապրեսյանը

_____